ARMENIA Journal en langue Arménienne fondé à MARSEILLE en 1885

ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ Ն

ԲԱՅՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամբողջ 31րդ տարեշրջանի (1915 օգոստոս–1916 յուլիս) բաժնորդագինն է 20 ֆրանգ. Թիւրքիոյ և Պարսկաստանի համար 10 ֆրանգ, ԿԱՆԽԻԿ: Ամսական բաժնորդագինն է 2 ֆրանգ. Թիւրքիոյ և Պարսկաստանի համար 1 ֆրանգ.: Նամակ կամ դրամ ղրկել այս հասցէով.

M. PORTOUKALIAN
Directeur du journal *Armenia*
MARSEILLE (France)

ԼԱ. ՏԱՐՒ
Թիւ 3

1915 ՕԳՈՍՏՈՍ 18 Թ.
(Հ.Տ. 1915 Օգոստոս 5)

ՊԱՏՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները: Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները:

Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով:

Ծանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ:

Les annonces en français et en arménien sont reçues au bureau de la Rédaction : Place Alexandre-Labadié ,17

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ "ԱՐԱՐԱՏ,,Ի ԼԱ ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ

(1915 ՕԳՈՍՏՈՍ — 1916 ՅՈՒԼԻՍ

Ամբողջ 31րդ տարեշրջանի (1915 օգոստոս–1916 յուլիս) բաժնորդագինն է 20 ֆրանգ (4 ոսկի արիւնեան կամ 7 րուբլի և 50 կոպէկ ռուսական) ամէն տեղի համար, ի բաց առեալ Թիւրքիան և Պարսկաստանը, ուր կը պրուի կէս բաժնորդագնով, այինքն ամբողջ տարեշրջանին համար 10 ֆրանգ բաժնորդագնով կարելի է բաժնորդագրուիլ նաև քանի՛ ամիս համար որ ուզուի, ամսական 2 ֆրանգ (40 սէնթ =75 կոպէկ հաշուելով, կամ 1 ֆրանգ Թիւրքիոյ և Պարսկաստանի համար:

Յայտնի է արդէն թէ անանք ոչ «Արմէնիայի Օժանդակ» ազգանպաստ ընկերութեան Կանանցմէ հրատարակած Օժանդակութեան Կանանցմէն համակրութեան, բայց ան չեն նախանձիր Արմէնիա անուանելու, քանի՛ անձի համար որ ուզեն, իրենց ստացած լրագրի ծրարին մէջ դնելով և կէս բաժնորդագնով, այինքն ամբողջ չրջանին համար 10 ֆրանգով կամ ամսական 1 ֆրանգով կարելի է նաև Օժանդակի նշանակած բաժնորդի հասցէին ուղղակի ղրկել թերթը, 12½ ֆր. (2½ ոսկի) բաժնորդագնով:

Մ. ՓՈՐԹՈՒԿԱԼԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

	ֆր. սնդ.
Ս. Հայ պէտքերուն մը Բ. տարբր.	,40
Բ. — Լ. (Սպառած)	
Ը. Թիւրքիոյ Հայերն եւ իրենց դրացիները (Գրեց Մ. Ա.եանեան)	,50
Թ. «Արեւելեան» լուսնթար (Ս. տարի)	1,40
Ժ. Վրէժ	,20
ԺԱ. Թուռա Բագարիս	,20
ԺԲ. Նկարներ Մ. Փարթուղալեանի պրած առանձնատուներէն	,15
Ժ. Մի պտկիկ հայրենեաց (Պուլկարիոյ Ցեղասպանութեան ժամանակակից մանրամասնութիւնը)	1,40
ԺԴ. Մի գալիք	,20

Մարելլէն դուրս ղրկելու փոստի ծախքը կը վճարուի հրատարակողէն:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հայկական կենտրոնական կոմիտէն եւ կովկ.-Հ.-Բարեգործ.-Ընկ.-Խորհուրդը նորիք կազմակերպած են բժշկական խմբեր, վանի, Մանազկերտի և Ալաշկերտիշրջանների համար, որ հիմնարկուած հնդբժիշկներ, ֆելդշերներ և ինտել.իգենտ կառավարիչներ խումբերի համար: Պայմաններ՝ բժշկին 400 րուբլի ամսական, ֆելդշէրներին 130 րուբլի, կառավարիչներուն 100 րուբլի, բացի ճանապարհածախիցն: Յանկացողները կարող են իրանց յայտարարութիւնները ուղարկել հետեւեալ հասցէով.

Société de Bienfaisance Arménienne
Place Abas-Abadskaya, N° 7
TIFLIS (Caucase-Russie)

«ԱՐՄԷՆԻԱՅԻ ՕԺԱՆԴԱԿՆԵՐ»ԻՆ

«Արմէնիայի Օժանդակ»ներէն կան անանք որ «չ իրենց պարտականութիւն կը կատարեն կանանցմէն համեմատ, «չ ալ պրութիւնը մը յայտնած են թէ «Արմէնիայի Օժանդակ»ութենէն հրաժարած են,

Ուստի կը պարտաւորինք զեկուցանել բոլոր «Արմէնիայի Օժանդակ»ներին թէ անանք որ մինչեւ տասնմեկ օգոստոս ամսին վերջը չեն կատարեր իրենց «Արմէնիայի Օժանդակ»ութեան պարտականութիւնը կանանցմէ Շրջ. յօդուածին համեմատ և կամ իրենց հաշիւ կարգադրելու համար պարտաւորուած մը չեն ըլլար ապահովագրուած նամակով մը, «Արմէնիայի Օժանդակ»ութենէ հրաժարած պիտի նկատուին, որով կը դադրի իրենց պարտականութիւնն հետեւաբար իրենց իրաւունքը:

Խմբագիր-տնօրէն
Արմենիա լրագրին
Մ. ՓՈՐԹՈՒԿԱԼԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վեհ. Կաթողիկոսի կոնդակը վանի Հայերին. — Հայկական ցեղնաժարը եւ Մարաչլի Հայերը. — Ռուսեւթիւրք պատերազմը եւ Հայերը. — Մահագոյժ Գրի գոր Զօհրապի. Ռուս զօրաբանակը Թիւրքահայաստանի մէջ. — Զօն մեր նահատակուած դիւցազն մարտիկներին. — Կովկաս կամաւոր երթալ ուզողներին. — Ազգ-Մարաչլի Հայ երիտասարդներուն. — Տեղական. — Ամերիկայի Միացեալ-Նահանգները եւ Սիրիա. — Արաբները Թիւրքերին դէմ. — Համեւրոպական պատերազմը. — Նոր ստացուած հրատարակութիւնները. — Ծանուցումներ:

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԱՆԻ ՀԱՅԵՐԻՆ

Գէորգ ծառայ Քրիստոսի եւ անհատնելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ինոս Աշենեան Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար աթոռոյ Աբրահամեան Աւետեւլական Մայր եկեղեցւոյ Սրբոյ Կաթող ինկէ Էջմիածնի, Հարազատ Հայկազուն որդւոց Մերոց, բնակիչք ի տիրապետեալ վան քաղաքի և ի վիճակս վասպուրականի. Տոգռնուրէ վանահարց և սրբազանաց միաբանից վանօրէից Հայոց, բարեկրօն քահանայից, ժիժարդոյ անպատից պատուական եւ բեսեխանական, կրօնական և քաղաքական ժողովոց, բարիչան հոտիս բարձրեալ Հանց եկեղեցեաց և պետութեան, վաստակաւոր ատենչաց, աշխատասէր վաճառականաց և արհեստաւորաց, քրանչան երկրագործաց և շինականաց, համեստասիրտ աղիկանց և օրիորդաց Հայոց աշխարհին վասպուրականի, շնորհք Աստուածային, սէր և միաբանութիւն, ողջոյն քրիստոսատուիչ և օրհնութիւն հայրապետական:

Բազմաչարչար և տկարն ժողովուրդն Հայոց, ի պատճառս տարաբաղդ հանգամանաց և պայմանաց պատմական կենաց մերոց, միշտ և հանապազ տարիպակ կայ մատնել ընդդէմ բազմապիսի ալեկոծանաց և անդադար հալածանաց, վասն պատուական պետութեան և ազգային լուսաւորութեան իւրոյ, ձառ ի սիրտ տեսանեմք, զի յընթացս ազգային պատմեան մերոյ ոչ պակաս և ժամանակ, յորում աշխարհն Հայոց և նահատակ եկեղեցին մեր, հանդերձ ժողովրդովքն իւրովազգս ճնշային յաղէտից և յոտպատակութեանց թշնամեաց և վայրենաբարոյ ժողովրդոց: Մակայն պոհնակութեամբ և մխիթարութեամբ յիշեմք ասա, զի ազգային հոգեկան կորովն Հայոց միայր հանապազ անհնկան և անյագեմ:

Արդէն իսկ դիտեմք, որգեակք սիրելիք, եթէ նախնիքն մեր երանելիք ի բրիտի հալածանս պժնդակահանութեան անբաւս և խաչատանգանս սոսկալիս կրէին վասն փրկութեան հայրենեաց և եկեղեցւոյ մերոյ, ի ձեռաց անիրաւ բռնաւորաց և նեղչաց ազգիս մերոյ: Եւ յայնմանէ իսկ յաւուրս եկեղեցին Հայաստանեայց և ազգն մեր տայր և յատուկ վարքեր գոհութեական և աշխարհական գործիչս անձնազոհս, որոց ազիքն ամրանդեալք և զօրացեալք Աստուածային շնորհօք և բարեպաշտական արժանեօք, և ինքեանք առաքինական պարծանօք զարդարեալք, դիմագրաւ լինէին աներկիւղ սրտիւ բիւրաւոր հալածանաց և տանջանաց թշնամեաց իւրեանց, որոց վասն ս. եկեղեցին և ժողովուրդն մեր յիշէ զնոսա օրհնութեամբ և երախտագիտութեամբ:

Եիշեցականեմք ձեզ, սիրելի քաջարի զաւակունք մեր, զի ի հինգերորդ դարու մեծ զօրութեամբ գաւազանեալ բռնաւոր Յազկերտն, մինչ ջանայր ծանրութեամբ հարկաց և զինու զօրութեամբ, զօրօք և զօրականօք իւրովք պղշտացուցանել խաղաղեկեղեցին և ժողովուրդն Հայոց, առաքինի և քաջարի նախնիքն մեր, ս. Ղեւոնդեանք, անձնազոհ վարդանանք և քաջամարտիկ վահանանք խիզախաբար հէրն ընդդէմ բռնաւորաց ի պատերազմ և վարդան պոյն արեամբ իւրեանց փրկեցին զազգն և զեկեղեցին ի կորստենէ:

Այսօր ևս զնոյն ահռելիս պատմական թշնամիք մեր ոչ զազգին ի դաւադրութեանց և ի չարահնար

մեքենայութեանց իւրեանց, Հրատարակութիւք թիւրքաց և պարենաբաժին փիւրդաց ապագաւակն և կոչանն զչէն դիւցօրայս հայոց, անխնայաբար կոտորեն և խողխողեն զանմեղ զաւակունս մեր, որբագործեն զազգային կրօնական և ընտանեկան սրբութիւնս մեր, զամենայն ինչս մեր և հրոյ ճարակ առնելով՝ ջամենայն կողմանց Հայաստանի, ի Բաղէշ, ի Մուշ, ի կարին և յայլ քաղաքաց, ի Սասնոյ և ի կիլիկիոյ լսեմք զպղբս և զպատակս անօգնական և անպէն զաւակաց, որոց վարդապետն արիւն կրկին հոսի և խռանի ընդ ապբիւրս և ընդ պետս պատուր Հայաստանի։

Գանութիւն և փառս վերատեքեմք առ Աստուած, զի զուք, որպեսզի սիրելիք, անձնատուր քրիստութեամբ ձերով, չատախոհ օգնութեամբ քրիստոսի զօրաց մեծին Ռուսիոյ և քրիստոսասէր օգնութեամբ քաջամարտիկ կառավարաց մերոց, փըրկեցաք յանպատի թշնամեաց, և այսօր սրտանձն ոգով աշխատելիք ի վաճ փրկութեան եղբարց և քերց ձերոց, որք ի յատանատի վիճակի կան, և վաճ ազատութեան ազգին հայոց ի բանութենէ և ի գերութեան կապանաց թիւրքաց։

Գաստի և սիրոյն ձեզ և յարգանք քրիստոսի ձերում, զի զուք, սիրելիք, ցուցիք աշխարհի եթէ գիտէք անձնազոհութեամբ և համբերաշխ ազգասիրական գործակցութեամբ պաշտպանել զազգային իրաւունս և գործունեութիւն ձեր։

Ոտսին և գնդապետական միաւորիւ գործունէութիւն և զինուցի քաջագործութիւն ձեր համարելով արժանի ամենայն գնահատութեան և քաջալերութեան, այսու հայրապետական կանոնակաւս, ի ս. Միութենէ առաքեմք և ի Մայր Աթոռս օրհնեմք զձեզ զամենեսին և մաղթեմք ի Տեառնէ պարգեւել ձեզ կար և զօրութիւն, քրիստոսկութիւն և օգնութիւն յամենայն գործս ազգային։

Լիայոյս եմք, զի նախաձեռնութեամբ և օգնութեամբ մեծազօր Ռուսիոյ և դաշնակից պետութեանց իւրոց վախճան լիցի գարաւոր տանջանաց և գերութեան հայոց։ Հաւատամք զի մերձ է փրկութիւն ժողովրդեան իմոյ և արշալոյն ազատութեան թիւրքահայաստանի։

Օն ուրեմն, որպեսզի սիրելիք, քրիստոսայարոյք և լի յուսով և համբերաշխ ոգւով գործեցէք, առ ի վերականգնել զնախնի փառս հայրենեաց մերոց։

Ցեր Աստուած փրկեսցէ զձեզ յամենայն փորձութենէ և ի նեղութենէ և յորոգայթից չարանենգ թշնամեաց։

Առաքեմք առ ձեզ զմիաբան Մայր Աթոռս զկերաշնորհ Սահակ արքեպիսկոպոսն, որ ունի մխիթարել և ամփոփել զամենեսին, որպէս առաք նաև զանհրաժեշտ հրահանգս վասն գործակցութեան իւրոյ։

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի մէնջ. ամէն։

ԳԻՒՈՐԳ Ե.
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Գրեցաւ կոնդակս հայրապետական ի 27 մայիսի 1915 ամի, քան տոմարիս ՌՑԿԴ, ի հայրապետութեան մերում Դ. ամի, յԱբարատեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի, ի վաղարշապատ։ Թիւ 920։

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԳՆԱԺԱՄԸ ԵՒ ՄԱՐՍԼԻԱԼԻ ՀԱՅԵՐԸ

Գիտակ սրտի ազգասիրական ամէն մարդու է, որ Մարսէյլի հայութիւնը ամէն առիթով ցոյց կու տայ իր ազգասիրութիւնը։ Ամէն անգամ որ ազգային կարիքներ կամ պահանջներ ծագած են, Մարսէյլի հայութիւնը միշտ առաջին շարքերուն մէջ գտնուած է։ Ամէն անգամ որ ազգային գործերու համար հանգանակութիւններ բացուած են, Մարսէյլի հայութիւնը միշտ առաջին շարքերուն մէջ գտնուած է։ Ամէն անգամ որ ազգային գործերու համար հանգանակութիւններ բացուած են, Մարսէյլի հայութիւնը միշտ առաջին շարքերուն մէջ գտնուած է։

Գիտակ սրտի ազգասիրութեան՝ հիմնուած օրէն նպաստած է հայկական գործին ու քան կարելւոյն քիչ կը պրպի տեղական խնդիրներով. սակայն ներքին ձայնի մի քանի խորհրդածութիւններ յայտնել և թելադրութիւններ ընել Մարսէյլի հայ գաղթականութեան, որուն մէկ անդամն եմ չորս 18 տարիէ ի վեր ի շնորհս համիտեան հանգանակութեանց Մարսէյլ ապաստանելոյս, նկատելով որ խորհրդածութիւններս կապ ունին հայութիւնը շահագրգռող ազգային շահերու ընդհանուր ուղղութեան հետ։

Թէ ներքին լրագիրները և թէ կովկասէն եկած հայ թերթերը ժամանակին իրարկէ կընան գիտել հայկական ճգնաժամի օր քան օրէ աստիճանալուն և թրքական ոճիրնոտ գործութեանց մանրամասնութիւններուն որոնց ենթարկուած է ոչ միայն մտաւորական ջանկատ հայաստանի ազգաբնակութիւնը՝ այլ և ամրողջ թիւրքիոյ հայութիւնը որ կը գտնուի երիտասարդ թիւրքերու ռէժիմին տակ կայսրութեան գանազան անկիւնները։

Բէթրակրատէն հասած 12 օգոստ. թուականու հեռագիր մը կը ծանուցանէ թէ Թիֆլիզէն լուր առնուած է որ 60.000 հայ փախստականներ ևս հասած են կովկաս և ուրիշ 100.000 ատրներու գալուստը կը սպասուի ի վան. նմանապէս Պարսկաստանի հայ գիւղերէն արտագաղթ մը հաստնական կերեւի։

Մինչ կովկասէ չարաւնակ գովեստներ կը լսենք հայ կամաւորներու մասին, որք ռուս քանակի կողքին կռուելով հասարակաց թշնամւոյն դէմ, գնահատելի ծառայութիւններ կը մատուցանեն։ Արդ կը հարցնեմ, ի՞նչ կընեն արտասահմանի հայերը ընդհանրապէս և ի մասնաւորի Մարսէյլի մեր գաղթականութիւնը իբր զօրութեան տարր մը երբ Հայաստան աշխարհ գոյութեան կռիւը կը մղէ, փոքր ազգութեանց պաշտպան դաշնակից պետութեանց հետ։

Թուրքիոյ հետ պատերազմի յայտարարութիւնէն քանի մը ամիս անցնելէ վերջը միայն յանձնախումբ մը կազմուեցաւ պատճառ որ Ալժէրիէն, Փարիզէն, Նիսէն և Անգլիայէն եկած նպիրատուութիւնները մէկէ հաշուելով հազիւ 7000 ֆր.ի գումար մը գոյացուց ի նպաստ կամաւորներուս չարժուժին. այսպէս նաև ուրիշ յանձնախումբ մ՚ալ որ կազմուած էր վաճ. Պօղոս փաշա Նուպարի հրահանգին համաձայն, ամիսներ անցնելէ վերջը հազիւ իբր 3000 ֆրանքի գումար մը հանգանակած է. ի՞նչ կը կարծենք, այսչափով իբր հայ ամէն պահպանութիւն ըրած վերջացա՞ծ կը համարինք. կայ ին որ կազմուած առաջին յանձնախումբին համար համակրութիւն չունէին. կան ալ որ վերջին յանձնախումբին համար համակրութիւն չունէին, բայց ա՛ր ալ հակին մեր համակրութիւնները կամ անհամակրութիւնները, չիշելու ենք որ մեծ գործութեանց և կամ առաքելութեանց համար միջոց չի պակսիր. կովկասի կառավարութեան համար նպաստ հաւաքել յանձնախումբը լաւ գաղափար, վասն զի գոյ Ազգ. Շահուց պաշտպանութեան համար կազմուած յանձնախումբն ալ կազմուած է և գրեթ. սակայն և այնպէս գործելով միջոցներ ունինք մեր նպէրը հասցնելու մեր համակրութիւնը առաւելապէս չունինք այս կամ այն գործունէութեանց խուզբերուն ըստ կամս. Այս մասին Ա. ընկերնիս լրագիրն ալ օգտակար կրնայ ըլլալ և գիւրութիւն տալ հայրենիքին նպաստել ուղղութեան պատահութիւն ընծայելու համար հանգանակութեանց էջ մը բանալով թերթին մէջ, ինչպէս տեսայ ֆրանսական թերթերը ամէն անգամ որ կոչ մը ըրած են ժողովրդեան պատասխաններուն հանգանակութիւն բանալով թերթերնուն մէջ ունէ ազգային կամ բարեգործական նպաստի մը համար՝ ժողովուրդը միշտ ինքնաբերաբար փութացած է պատասխանել անոնց կոչերուն առատապատութեամբ։ Գիտենք նաև որ Պալքանեան պատերազմին ատեն տեղւոյս Հելլէն գաղթականութիւնը դրամական ո՛րպիսի նշանակալի զոհողութիւններ ըրաւ։ Շատերէն մին ըսեմ. իմ ծանօթներէս հակիճի առաւտուրով զբաղող հայ մեսա խանութան մը 10.000 ֆր.ով մասնակցեցաւ ազգային մեծ գաղափարին իրականացմանը համար, մինչդեռ մենք այդ խանութպանէն շատ աւելի աչքառու դիրք ունեցող վաճառականներ կը հաշուենք մեր մէջ որոնք ձեռնպահ մնացին ցարդ, և կամ ամենէն առատաձեռն երևցողները քանի մը հարիւր ֆր.ի խնդիրով դժուարով մը սասնակցեցան. իսկ օրէ վաստկող ու օրէ ուտող գաղափարդը թէև բազմաթիւր չատ աւելի առատաձեռնօրէն մասնակցեցաւ քան ունևոր համալուղները, բայց նոյն իսկ այդ դասակարգն ալ չի կրնար դասել հայրենեաց համար զոհողութիւն ընդդէմ բարձր սահմանին վրայ, քանի որ ի՞նչ է առհասարակ արտասահմանի Հայերէն պահանջուածը, լոկ դրամական նըպաստ մը ընդհանրական հաւաքոյծակցութեան մէջ. ի՞նչ չափով կը մասնակցինք մեր դրամական նպաստը Ազգ. Շահերուն, երբ մայր հայրենիքին մէջ գոյութեան կռիւը կը մղուի. ես խղճմտահամախան չեմ գաներ մեր միջավայրին տուած նպաստը, մանաւանդ որ ծագրելի ալ կը գտնանք աննչան մասնակցութիւնով մը պարտականութիւնը կատարուի հաւեր ալ ասնելով։ Այս երկրին մէջ երիտասարդ թուրքերու վայրագ կառավարութիւնը չի կայ որ բանի գնով մեր բնակարաններէն գուրս հանելով տունեցածնիս յափշտակէ և խլտվին տալ վայրը զչէ. Ֆրանսայի ազատ և մարդասէր կառավարութեան տակ անարգել քիչ թէ շատ կը չահինք, կատենք կը խմենք և հաճոյքներս կը նայինք. արդեօ՞ք Ֆրանսական կառավարութեան հանդէպ երախտագիտական պարտք մը տառուցած չենք ըլլար մեր կռիւ երբ երկրի կարեւոր զոհողութիւններով նպաստենք պաշնակիցներու բազկին հնա իր բազդը կապող հայ կառոյց տարբերուն։ Ըստ թելադրութեան պաշնակից կառավարութեանց դէպի երկնց ժողովուրդը՝ նեղ մենք արտասահմանի Հայերս ալ յօժարինք մեր ամէնօրեայ հաճոյքներէն զրկելով յարատեւութեամբ՝ քան մը յատկացնել, այն ատեն վստահաբար չշափելի նպաստ մը ըլլան կըլլանք որ իր արժէքը կատնեայ համազգային գործակցութեան կշռոյ մէջ և միանգամայն զմեզ հիւրընկալող երկրին երախտագիտական տուրք մը տառուցած կըլլանք ան ձեռնատու ըլլալով ռազմիկներուն վրայ կատ քաջարի հայ այժերուն։ Մեր Մարսէյլաբնակ ազնիւ ազգակիցներէն սակաւին կը սպասենք ու կը յատանք օգնութիւն, ինչ ձեով և ինչ միջոցով որ կատկեն տալ։ Ինչպէս մեր ընտանիքի մէկ անդամին հիւանդութեան ժամանակ անկ պոհպանութիւն չենք խնայեր, նոյնը ընենք նաև մեր մեծագոյն ընտանիքին, ազգին համար։

ԳՕԱՅ Վ.Ա.ՀԱՆ

ՌՈՒՄԵԹԻՐԲ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Հայաստանի մէջ ամենաբնակ տարածքը ընդհանրական է այլ ևս։ Սև Ծովի եզերքի բոլոր հայութիւնը կը գչեն երկրի խորերը. կիրատանի մէջ մինակ 70 տարեկանէ վեր ծերերն ու պառաւները ձեռացած են. իբրև յեղափոխական ձերբակալած են 60 հայեր և դնդակահարած. իսկ միւս նեերը գյած և ջարդած են։ Նոյնը և Տրապիզոնի մէջ. մինակ 12 տարեկանէն վեր եղբայրները պահած են, իսկ միւսները գյած. Տրապիզոնի չրջակայ հայաբնակ գիւղերը ևս

ՎՇՏԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐԱՆԸ



Ֆրանսահայ գրականության մեծ երախտավորներից մեկի՝ Վշտայի հայկական հուշարանի բացումը տեղի կունենա Փարիզում, Մայիսի 28-ին, Կարմիր Խաչի Ընդհանուր Ժողովի օրը։

Հուշարանի կանգնեցման գաղափարը ծագել է Վշտայի մահվան առաջին տարելիցին։ Ֆրանսահայ գրականության այդ մեծ վարպետի մահը ցավալի կորուստ էր ոչ միայն հայ գրականության, այլև ամբողջ ֆրանսական գրականության համար։ Ֆրանսական մամուլը ամենայն սրտագրությամբ հարգանքի տուրք մատուցեց հանգուցյալ գրողին։ Ֆրանսական գրականության ամենանշանավոր դեմքերը ոգևորությամբ ընդունեցին հայ գրողի հիշատակը հավերժացնելու գաղափարը։ Ֆրանսական գրականության ամենանշանավոր դեմքերը ոգևորությամբ ընդունեցին հայ գրողի հիշատակը հավերժացնելու գաղափարը։

Հուշարանի կանգնեցման գործը ստանձնեցին Ֆրանսական Գրողների Միությունը և Ֆրանսական Գրողների Ընկերությունը։ Հուշարանի կանգնեցման գործը ստանձնեցին Ֆրանսական Գրողների Միությունը և Ֆրանսական Գրողների Ընկերությունը։

ԱՄԵՐԻԿԱՒ ՄԻԱՑԵԱԼՆԱՀԱՆԴՆԵՐԸ ԵՒ ՍԻՐԻԱ

Գահիրէէն Սիրիացիներ գրած են փարիզի «Թան»ին թէ Սիրիան անցուցած ճգնաժամը խեղճ Ասորի ժողովրդին համար հանակրութեան մեծ չարժում մը յառաջ բերած է Ամերիկաի և մանաւանդ Միացեալ-Նահանգներուն մէջ։ Հանգանակութիւններ կը լինին, նպաստներ հաստցընելու գործը կազմակերպելու համար յանձնաժողով մը կազմուած է և ուսեստեղիններով ու ամէն տեսակ պէսքի բաներով բեռնաւորուած չողհաւներ ղրկուեցան Նիւ-Եորքէն Պէյրութ և Լաճիա։

Թիւրք կառավարութիւնը նախ ուզեց գրաւել այդ նպաստները. բայց ամերիկեան հիւպատոսներուն ցոյց տուած ազդու դիրքը յաղթեց վերջապէս այդ դժուարութիւններին և այժմ մանաւոր յանձնաժողով մը, որ Պէյրութի ամերիկեան ֆաքիլտէի բրօֆէսէօրներէն Տ. Րէյտի նախագահութեան տակ կը գտնուի, առատ բաշխումներ կընէ Սիրիաի չքաւոր ժողովրդին։ Ամերիկեան կառավարութիւնն ինք ալ գաղթել ուզողներուն տրամադրութեան տակ դրաւ Սիրիաի չուրերը գտնուղ իր յատկանաւերը, գաղթողները եգիպտոս փոխադրելու համար։

600.000էն աւելի Ասորիներ արդէն գաղթած են Ամերիկա, որոնց կէսէն աւելին կը բնակին Հիւսիսային Ամերիկաի Մ'իացեալ-Նահանգները։ Անոնցմէ չատեր ամերիկեան երկրացի (citizen) եղած են։ Վերջապէս Ամերիկաի Հրեայ գաղութներն ալ յուզուած են իրենց կրօնակիցներուն պատահածին մէջ կրած թշուառութիւններն իմանալով և ասոնք ալ ուզեցին օգնութեան հասնիլ անոնց։

ՏԵՂԱԿԱՆ

Ինչպէս արդէն յայտարարած ենք, նոր հրատարակուած օրէնքի մը համեմատ կառավարութիւնը արտօնուած է վերջին ժամանակներ ֆրանսական երկրացի (citoyen français) եղողտարահպատակներուերկրացիութեան իրաւունքը յետ առնելու կամ պահպանելու։ Այդ նկատմամբ իր ուսած որոշումները կը հրատարակուին պաշտօնական Օրագիրին (Journal Officiel) մէջ։

Նոյն հրատարակութենէն կիմանանք որ հետեւեալ Հայերը պահպանած են իրենց ֆրանսացիութեան իրաւունքները մէջ։

Գաւազարեան Գաւազար, Նաւապ (navigateur), ծնած կալիպոլի (*Թիւրքիա*) 1871 *մայիս* 14ին, կը բնակի Մարսէյլ, Նիւոլա փողոց, թ. 45. *բնիկ եղած* (naturalisé) 1913 *սեպտեմբեր* 16ին. *չարժան վիճակի մէջ զօրք* (mobilisé)։ *Այդպէս տեսակէտով լաւ տեղեկութիւններ առնուած են իր կացութեան մասին։*

Ինճէեան Միհրան, *հասութաւոր*, *ծնած կալոլիս* (*Թիւրքիա*), 1851*հոկտեմբեր* 18ին. *կը բնակի Նիս, պուլվար Ցարկվիչ, Մարկըրիդ ամարանոցը. բնիկ եղած* 1914 *սեպտեմբեր* 15ին. *Ֆրանսա եկած է* 20 *տարիէ ի վեր։ Այդպիսին տեսակէտով լաւ տեղեկութիւններ առնուած են իր կացութեան մասին։*

ԱՐԱՒՆԵՐԸ ԹԻՒՐՔԵՐԻ ԴԷՄ

Գահիրէէն կը հեռագրեն օգոստ. 4ին.

«Միջագետքի մէջ Անգլիացիները չախչախուած թիւրքական բանակի ճնացորդները երբ խառնիխուռն վիճակի մէջ դէպի Պաղտատ կը նահանջեն, այս քաղաքի ժողովուրդը ատքի ելեր և չէ ուզեր անոնց ներս մտնելուն թոյլատրել։ Քաղաքային կառավարիչը, Սիւլէյման Նազիֆ պէյ, զօրքերի կողմը լինելով, իր բոլոր թիւրք պաշտօնեաներով մէկտեղ վանաւեցաւ քաղաքէն։ Քեռայ Նազիֆ պէյ թիւրքական բանակի ճնացորդներով ուղղուեցաւ Հիլլայի վիւսիլայեթի սրբազաններն եղող Նէճէֆ և Քէրպէլա սուրբ քաղաքներին վրայ։ Այնտեղ ևս ժողովուրդը թիւրքերին դէմ ոտքի ելաւ։ Իմամները խալիֆ Ալիի նետիրական բեմի բարձունքէն հաւատացեալները յորդորեցին Գերմաններուն դաշնակիցներին դէմ քալել իր կատաղութեան մէջ, թիւրք վալին հրետանիները ուղղեց Սէյէտանա-էլ-Հիւսէյնի գրաբէթին. բայց ռումբերը չկրցան հասնիլ անոր։ Այս սրբապղծութեան առջև Թափառական ցեղերի և քաղաքայի Հրեայ ժողովրդի բարկութիւնը ծայրայեղութեան հասաւ, որոնք իսկոյն թիւրքերուն դէմ քալեցին։

Արիւնահեղ ընդհարում մը տեղի ունեցաւ և կռիւը շարունակուեցաւ ամբողջ օր մը, երկու կողմէն հատասար կատաղութեամբ։ Վերջապէս թիւրքերը նահանջեցին, ըմբոստները առին երկու թնդանօթ և մեծ քանակութեամբ հրացան ու ռազմանիւթեր։ Յաղթական Հրեայ պետերը փառաւորապէս մտան Հէրպէլա ու պատրաստուեցան վարտիճ օմանեան դրօշակը կառավարական պալատին վրայէն և տեր դարձան քաղաքին, պարտադրեցին Հրեայ ոստիկանները գործի անցնիլ և ամէն կողմ կարգ ու կանոն հաստատեցին։

Արաբական շարժումը՝ ի սկզբան կարծուածէն շատ աւելի կարևոր կերպի է և ամէն օր թիւրքական իշխանութիւնները նոր ընկերութիւններ դուրս կու գան։ Ասոնք առաջին անգամ ըլլալով Հրեաներն ալ կը մտնեն մէջերնին։ Ասոնք ալ ունին իրենց կրօնական կառավարութիւնը, որուն գլուխը կը գտնուի Երուսաղէմ։ Ասոնք ալ ունին իրենց կրօնական կառավարութիւնը, որուն գլուխը կը գտնուի Երուսաղէմ։

ՀԱՄԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ռազմադաշտերէն եկած վերջին լուրերը նպաստաւոր են դաշնակիցներին։

Գերմանացիները վարսովին առնելէ յետոյ իրենց ծրագրի համեմատ յառաջդիմել չկրցան։ Ռուսական բանակը որ անեղծ մնացած էր, իր յարմար տեսած կէտերի վրայ կը շարունակէ յարձակիլ Գերմաններուն վրայ և անհանգիստ ընել զանոնք. իսկ իր նահանջած տեղերէն ամէն բան ժողված տարած ու անապատ թողած է. այնպէս որ Գերմանները ոչինչ կրնան գտնել հանգստանալու և ապրելու համար։

Գերմանական նաւատորմ մը, բաղկացած 9 զրահաւորէ, 12 յածանաւէ և բազմաթիւ դորիլլանաւերէ, յամառօրէն յարձակում ը'ըրաւ օգոստ. 8ին Ռուսիոյ Բիկա ծովածոցին վրայ։ Այդ յարձակումը յետ մղուեցաւ։ Ռուսերի ջրասաւառնակները ռումբեր նետելով նպաստեցին յաղողութեան։ Կերման յածանաւ մը և 2 դորիլլանաւեր ռուս ականների բազմութեան վնասուեցան։

Իտալացիները կը շարունակեն միշտ յառաջանալ, թէև կամաց կամաց, իտալական առածին համեմատ, Qui va piano va sano (ով որ կամաց կերթայ, ապահով կերթայ)։

Ֆրանսայի կողմը թէև բաւական մեծ ոյժ հաւաքած են Գերմանները, բայց փոքր յաղողութիւն մ'ալ չկրցան ունենալ։ Ա. Բիկօնի կողմը յառաջանալու համար զահաժառանգ իշխանի բանակին կատաղի չանքերը բոլորովին ապարդիւն մնացած են։ Իսկ Ֆրանսայիները կը յառաջանան Ա. զօրաի մէջ։

Տարտանէլէն եկած վերջին լուրերը կիմացունեն որ դաշնակիցները կը յառաջանան Կալիպոլիի մէջ, թէև այդտեղի դիրքերն այնպէս են որ շատ դժուարութիւններ պէտք է յաղթել յառաջանալու համար։

Պուլկարիաի պահանջներին պատասխանով դանագրիր մը ղրկած է քառակ համաձայնութիւնը։ Թէև բնագիրը դեռ չէ հրատարակուած բայց կերևի թէ այդ պատասխանագիրը դոհացուցած է Պուլկարիան։

Յունաստանի նորընտիր Երեսփոխանական ժողովը դումարուեցաւ օգոստ. 16ին։ Ժողովին առեղնապետ ընտրուեցաւ, 182 քուէով, Տ. Զավիցիանոս որ վէնեզելոսականների ընտրելին էր. իսկ կառավարականների ընտրելին, Տ. Տէլիս, 93 քուէ միայն ստացաւ։ Քուէարկութեան արդիւնքը ուժդին ծափահարութիւններով ողջունուեցաւ։ Կաբինետի կառավարութիւնը հրաժարական տուաւ։ Իրեն պէտք է յաջորդէ Տ. Վէնիզելոս։

ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայկ-Արամ Քիպարեան-Արջուկենց. ՍՐՏԻ ՄՐՄՈՒՆՋՆԵՐ։ *Հայ բանաստեղծութիւններ ֆրանսերէն թարգմանութեամբ. հեղինակի լուսանկարով։* Haïg-Aram Kibarian-d'Artchouguentz. —Les Murmures du cœur. Poésies arméniennes accompagnées d'une traduction de l'auteur. Paris. Imprimerie Polyglotte G. H. Nercès. 1915.

(Երիտասարդ հեղինակի գրած բանաստեղծութիւններուն երախայրիքն է որ լոյս ընծայուած է այս անգամ, գոհացում տրուելու համար հայ և ֆրանսայի բարեկամներուն հետաքրքրութեան։ Եթէ հարկ եղած քայլերը գտնէ, ուրիշ հատորներ ալ լոյս կը տեսնեն։ Թէև հեղինակին առաջին փորձերն են եղած այս գրուածները, կան կտորներ որ չատ գեղեցիկ են, նոյն իսկ հիանալի, թէ՛ երևակայութեան թռիչներովը և թէ արտայայտուած փափուկ զգացումներովը. օրինակ՝ Մայրիկը, Ամբաններուն կոչնակը, Անկենդան ժայռերը։ Հայ մայրը ևն.։ Հեղինակը տեղ տեղ չատ է օգտուեր բանաստեղծներէն ազատութենէն, չեղելու համար տաղաչափութեան կանոններէն։

Տպագրութիւնն ալ գեղեցիկ է։

Գինն է 2 ֆրանգ. հոլանտական թղթի վրայ տպագրուած 2 ֆր. և 50 սանտ.։ Ստանալու համար դիմել հեղինակին 15, rue Jean-Goujon. Paris։ կարելի է առնել նաև Ամէնսիաի գրատներէն (Մարսէյլի մէջ)։

***

Mélik S. David-Bey. L'Interprète militaire. L'ANGLAIS pour nos soldats, cyclistes, automobilistes, brancardiers, infirmiers, médecins etc. Prix: 50centimes. Editeur Albert Mericant, Paris. L'adresse de l'auteur; S. David-Bey, 39, rue Lafayette, Paris.

***

Dans la même collection. L'ALLEMAND. Prix 50 centimes.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԾԱԽՈՒՑ ԳԻՐՔԵՐ

ԶԱՆԱԶԱՆ ՀԱՅԱՍԻԱՑԻՈՅ ԹԻՒՆՆԵՐ

Հ. Ա. Գոնտարճեան. — ԲԱՌԱԴԻՐՔ ԳԱՂԳ.-ՀԱՑ.։ Վէնեսիկ Ս. Ղազար. 1914։ Գին 1 ֆր. 10 (1,20)։

(Գրպանի փոքրագիր բառարան մ'է 710 երեսներէ բաղկացած, ժամանակին և ֆրանսերէն գրէթէ բոլոր գործածական բառերը պարունակող. վերջը դրուած է նաև անկանոն բայերի խնդարհումը։)

Հ. Ա. Գոնտարճեան. — ԳՐՊԱՆԻԿ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՑ-ԳԱՂԳ.։ 1914։

(Մանր տառերով ու մաքուր տպագրութեամբ 360 երեսներէ բաղկացած բառդրքոյկ մ'է որ 5.000ի չափ բառ կը պարունակէ և վերջն ալ ընտանեկան կարդ մը խօսակցութիւններ դրուած են, ֆրանսական բացատրութեան տեղերն ծանօթացնելու համար) 1 ֆր. 05 (1,10)։

(Գանթարեան) Բառ.իրք Գազդեեան։ Հաբեռ-Տ ամերիկ հայատառ. ճոխացած, Բ. տպագրութիւն. 1912։ Մանրատառ երկհիւան 1238 երեսներէ բաղկացած ստուար դրամ մը։ Ֆրանսերէն իւրաքանչիւր բառի հնչումը հայերէն տառերով ալ դրուած է։ Գին 6 ֆր. և 50 սանտ. (Մարսէյլէն դուրս ղրկուելու համապարհածախքով՝ 7 ֆր. և 80 սանտ.։

Նոյն լրիւ, 8 ֆր. և 30 սանտ. Մարսէյլէն դուրս՝ համապարհածախքով՝ 9 ֆր. և 50 սանտ.։

ՏՆՕՐԷՆ—ՏՊԱՐԱՊԻ
Մ ՓՈՓՈԽԱԿԱՆ
ՄԱՐՍԷՅԼ։

Հաբեռ Տպարան Մ. Փորթուգալեան
Le Gérant : François CARRIERE.
Marseille. — Imprimerie du Midi